ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի մարտի 13-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Երևանի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲ ընկերության կարիքների համար գնումների համակարգման և գնումների խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷԷՀՕ-ՆԲՄԽԾՁԲ-25/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 11.03.2025թ. ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ 13.03.2025թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1 :

Հրավերում սահմանվել է «Մասնագիտական փորձառություն»:Պարտադիր պայման է հանդիսանում մասնակցի «Մասնագիտական պատասխանատվության ապահովագրության առկայությունը» պայմանը:

Խնդրում եմ պարզաբանել, թե ի՞նչ է նշանակում այդ պայմանը, տալ տրամաբանական և հստակ պատասխան և նշել, թե ինչպե՞ս և ի՞նչ կարգով պետք է տրամադրվի ապահովագրության առկայությունը:

Պարզաբանում N 1:

Պատասխանատվության ապահովագրությունը ապահովագրության լայն տարածում ունեցող ճյուղերից է, որտեղ ապահովագրության օբյեկտ է հանդիսանում ապահովադրի՝ օրենքով կամ պայմանագրերով սահմանված պատասխանատվությունը երրորդ անձանց պատճառված վնասների գծով: Ձեռնարկությունները, կազմակերպությունները կամ քաղաքացիները իրենց գործունեության ընթացքում կարող են վնաս հասցնել երրորդ անձանց, ինչը ենթակա է փոխհատուցման: Պատասխանատվության ապահովագրության էությունն այն է, որ ապահովադիրները, վճարելով ապահովագրավճար, ապահովագրողներին են փոխանցում երրորդ անձանց իրենց կողմից հասցված վնասի փոխհատուցումը: Պատասխանատվության ապահովագրությունը ունի երկակի նշանակություն. առաջին հերթին այն պաշտպանում է ապահովադիրներին կորուստներ կրելուց, երբ անհրաժեշտություն է առաջանում փոխհատուցելու իրենց գործունեության արդյունքում տուժածներին հասցված վնասը: Երկրորդ, տուժածներին երաշխավորում է կրած վնասի փոխհատուցումը: Հատկապես այս հանգամանքը հաշվի առնելով, շատ երկրներում պատասխանատվության ապահովագրության որոշ տեսակներ կրում են պարտադիր բնույթ, քանզի անկախ վնաս հասցնողի վճարման հնարավորությունից և կամքից, պետք է երաշխավորված լինի տուժողի կողմից կրած վնասի փոխհատուցումը: Մասնագիտական պատասխանատվության ապահովագրությունը պաշտպանվածություն է ընձեռնում այն անձանց, որոնք զբաղվում են իրենց հաճախորդներին մասնագիտական ծառայությունների մատուցմամբ և իրենց մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում ակամայից թույլ են տալիս անզգուշություններ, սխալներ, չկանխատեսված բացթողումներ, ինչի հետևանքով վնաս են հասցնում հաճախորդներին, որոնք ի սկզբանե վստահում էին նրանց, համոզված լինելով վերջիններիս մասնագիտական հմտության նկատմամբ: Ապահովագրվում է աուդիտորների, հաշվապահների, փաստաբանների, նոտարների, բժիշկների, գնումների համակարգողների և այլ մասնագետների կողմից ծառայությունների մատուցման դեպքում նրանց գործողությունների կամ անգործության հետևանքով առաջացած քաղաքացիական պատասխանատվության ռիսկը:

Հիմնավորման նպատակով կարող եք հրավերով սահմանված կարգով հայտով ներկայացնել համապատասխան ապահովագրության առկայությունը հիմնավորող փաստաթղթի պատճեն:

Հարցադրում N 2:

Հրավերով սահմանվել է հետևյալը՝

- Գնահատման չափանիշներից որևէ մեկին չհամապատասխանելու դեպքում մասնակցի հայտը ենթակա է մերժման:
- Ոչ գնային պայմաններին չբավարարող հայտերը ենթակա են մերժման:

Խնդրում եմ պարզաբանել, թե «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 526-Ն որոշման և այլ իրավական ակտերով նախատեսված ո՞ր իրավակարգավորումից է օգտվել պատվիրատուն՝ սահմանելով վերոնշյալ պայմանը, հաշվի առնելով այն, որ պատվիրատուն հրավերում սահմանել է միավոր արժեքների գնահատման բանաձև, որը հակադարձում է վերը նշված կետերին:

Պարզաբանում N 2:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակի տեսանկյունից պատվիրատուն սահմանել է իր կարիքին համապատասխան ծառայություն գնման չափորոշիչներ և տվյալ դեպքում չափորոշիչները ոչ թե իրարամերժ են, այլ իրար փոխլրացնող՝ սահմանված են նվազագույն պահանջներ, իսկ այդ պահանջներին բավարարող մասնակիցների չափանիշները գնահատելու համար սահմանված է համապատասխան գնահատման կարգ:

Հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝ գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակված են նաև պաշտոնական տեղեկագրում:

Հարցադրում N 3:

Հրավերով սահմանված չէ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին տրվող միավոր արժեքների գնահատման բանաձև:

Խնդրում եմ պարզաբանել, թե «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 526-Ն որոշման և այլ իրավական ակտերով նախատեսված ո՞ր իրավակարգավորումից է օգտվել պատվիրատուն՝ սահմանելով վերոնշյալ պայմանը:

Պարզաբանում N 3:

Հարգելի մասնակից, պատվիրատուի կողմից չի կարող պարզաբանվել այն, ինչ սահմանված չէ հրավերով՝ այսինքն դուրս է սույն հրավերի բովանդակության շրջանակից, սակայն հայտնում ենք, որ գնային առաջարկի ներկայացման և գնահատման կարգը հստակ ներկայացված է հրավերում, միաժամանակ խնդրում ենք նախքան հայտ կազմելը և ներկայացնելը մանրամասնորեն ուսումնասիրել գնման ընթացակարգի հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԷԷՀՕ-ՆԲՄԽԾՁԲ-25/2» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մ. Հարությունյանին:

Հեռախոս՝ 077 870378
Էլ.փոստ՝ harutyunyanvmaria8@bk.ru
«ԷԷՀՕ-ՆԲՄԽԾՁԲ-25/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով